ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2014թ. թիվ 142-Ա

Ս. ՄԱԹՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի, 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Սամվել Մաթոսյանին 2014թ. ապրիլի 25-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Անանիա Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Անանիա Շիրակացու անվան թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Սամվել Մաթոսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 16
ք.Վանաձոր